

դակին թէ ոչ է գեղեցկացուցեալ կամ ծաղկեցեալ դեղորէիւք վասն այսմ պատճառաց, գրեցոյց մին կոնդակ որպէս որ կամի այժմ ։ Որչափ կը հասկընամ՝ այս երկու անձինք, որոնց ձեռնադրութեան կոնդակներն իրապէս անվաւեր էին, կասկած յարուցեր են Սարգսին Արքեպիսկոպոսութեան կոնդակին վրայ. վասն զի Սարգիս իր նախկին անպաճոյճ կոնդակը չհաւնելով, նոր ծաղկնկար կոնդակ մը բերել տուած է եղեր, որպիսի է իրօք այժմ իմ վերն յառաջ բերած կոնդակը ։

Իսկ սրբացուցման հանդիսութիւնները, կը ստորագրէ (ութերորդ) նամակին մէջ, գրեալ ի 20 Օգ. 1746: Ահա վեցերորդ նամակին օրինակը ։

*Տեսուն Տեսուն ՄիջիԹարայ Վեհսնանեայ գերգգոտութեանն ընծայեսցի սեռ եւ ողջոյն Յիսուսակիր:*

Չգիր վսեմախոհ հայրութեանդ թէպէտ կանխաւ առնկալայ, որով եւ զպարունակեցեալն ի նմա զյուշարարութիւն ծանեայ: Բացայայտիչ կարեմ արդէն բացորոշել թէ հիմ արդեօք իցէր այս, որ ի համապատասխանելն այսքան յամբացայ, յաղագս որոյ եւ գիր զարմացայ, ուստի եւ առինքս վարկայ թէ մոռացայ կամ տմարդացայ: Որոյ զներումն ընդ այլոց ներելեաց նիւթոց՝ իմոց պակասութեանց ի ձեռն շրթանց գրչի իմոյ՝ խոնարհաբար աղաչեմ: Նաեւ յետ այսօրիկ զկրիցն իմ վէպ՝ քոյդ մտերմութեան յուշ առնել կամիմ համառօտիւք: Քանզի Ստեփան վարդապետ եղբայրն մեր՝ հրապուրեցեալ ոչ գիտեմ թէ յորպիսեւոյ ոգւոյ, հանդերձ երկու ախտակիր ընկերակցօքն, զխորխորատ իմն խորագոյն մրձօք սրա-